# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

☎ 091 700 667
04.09.2019թ
Ե/094-19

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի թիվ 66 որոշումը:

Առդիր՝ 1էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

☎ 091 700 667

28.08.2019թ

## ՈՐՈՇՈՒՄ 66

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 101-րդ հոդվածով և<< Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,հիմք ընդունելով Լուսվարդ Քարամյանի սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասերից /վկայականներ N1154224,տրված 31 օգոստոսի 2004-ին և N1154223 տրված 31 օգոստոսի 2004-ին / հրաժարվելու մասին դիմումը՝

Որոշում եմ

1. Լուսվարդ Քարամյանի,Արայիկ Քարամյանի,Ներսիկ Քարամյանի սեփականության իրավունքով պատկանող 06-097-105-042 կադաստրային ծածկագրում գտնվող 0.31հա,և 06-097-105-043 կադաստրային ծածկագրում գտնվող 0.41հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Գլխավոր մասնագետին սույն որոշումն ընդունելուց հետո,սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով 15 օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանմանը:
3. Գլխավոր մասնագետին հողամասի նկատմամբ իրավունքի հավաստող վկայականը ստանալուց հետո համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան